ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ

*02 դեկտեմբերի, 2020թ.*

**Հայաստանի Հանրապետության**
**Ազգային ժողովի նախագահ**
**ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ**

Հարգարժա՛ն պարոն Միրզոյան,

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի 1-ին մասի, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 65-րդ հոդվածի 1-ին մասի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացնում ենք «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը:

Նախագծին կից ներկայացվում են՝

- Խմբակցության որոշումն օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու մասին.
- Նախագծերի փաթեթի ընդունման հիմնավորումը.
- Տեղեկանք, որտեղ տեսանելի ձևով ներկայացվում են օրենքների համապատասխան հոդվածներում առաջարկվող փոփոխություններն ու լրացումները:

Նախագծի հիմնական զեկուցողն է Էդմոն Մարուքյանը:

Խնդրում ենք ներկայացված նախագիծն օրենքով սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Հարգանքով՝

**ԷԴՄՈՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ**

# *ՈՐՈՇՈՒՄ*

## *ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ՀԱՆԴԵՍ ԳԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի 1-ին մասը, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և 65-րդ հոդվածի 1-ին մասը՝ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցությունն իր *2020* թվականի *դեկտեմբերի 01*-ի նիստում՝

### *ՈՐՈՇԵՑ*

հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ և Ազգային ժողովի քննարկմանն առաջադրել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

## *Պ Ա Տ Գ Ա Մ Ա Վ Ո Ր*

| | | |
|---|---|---|
| Մարուքյան Էդմոն Հրաչիկի | 126 | ԼՀԿ |
| Գորգիսյան Գեւորգ Սամվելի | 125 | ԼՀԿ |
| Ալեքսանյան Սարգիս Ռոբերտի | 123 | ԼՀԿ |
| Այվազյան Հրանտ Գնունու | 131 | ԼՀԿ |
| Անդրեասյան Էդվարդ Հրաչի | 128 | ԼՀԿ |
| Բաքայան Հարություն Վիլիկի | 118 | ԼՀԿ |
| Բաղդասարյան Գուրգեն Նիկոլի | 124 | ԼՀԿ |
| Գրիգորյան Սրբուհի Էդիկի | 122 | ԼՀԿ |
| Եղիազարյան Արմեն Էդիկի | 119 | ԼՀԿ |
| Խաչատրյան Արկադի Սանասարի | 116 | ԼՀԿ |
| Կոստանյան Աննա Մայիսի | 120 | ԼՀԿ |
| Մինասյան Սարիկ Սամվելի | 132 | ԼՀԿ |
| Սամսոնյան Անի Տաճատի | 117 | ԼՀԿ |
| Սիմոնյան Կարեն Մանվելի | 121 | ԼՀԿ |
| Սիմոնյան Տարոն Վարդանի | 130 | ԼՀԿ |
| Ստեփանյան Ռուբիկ Շահումի | 129 | ԼՀԿ |
| Ստեփանյան Ստեփան Սամվելի | 127 | ԼՀԿ |

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# *Օ Ր Ե Ն Ք Ը*
# «ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.***

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքը (այսուհետ՝ Օրենք) լրացնել նոր 28.1-ին հոդվածով՝

«**Հոդված 28.1. Շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողների՝ ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորելը կամ գերի ընկնելը**

1. Շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողները ճանաչվում են ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած՝ սույն օրենքի 40-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված կարգով կամ գերի ընկած՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:»:

***Հոդված 2.***

Օրենքի 40-րդ հոդվածում.

1) 1-ին մասը լրացնել նոր 8.1-ին կետով՝

«8.1) ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած ճանաչվելու դեպքում.»:

2) Լրացնել նոր 1.1-ին մաս՝

«1.1. Պայմանագրային զինծառայողը պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով ճանաչվում է ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած, եթե զորամասում կամ ծառայության վայրում կամ մարտադաշտում նրա գտնվելու վայրի մասին առնվազն երեք օր տեղեկություններ առկա չեն: Սույն մասով սահմանված կարգով զինծառայողին անհայտ կորած ճանաչելու հետևանքով չեն առաջանում քաղաքացուն քաղաքացիական դատավարության կարգով անհայտ բացակայող ճանաչելու արդյունքում վրա հասնող իրավական հետևանքները:»:

***Հոդված 3.***

Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում «8-րդ կետով սահմանված դեպքում» բառերը փոխարինել «8-րդ և 8.1-ին կետերով սահմանված դեպքերում» բառերով:

***Հոդված 4.***

Օրենքի 61-րդ հոդվածում 13-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«13. Սույն օրենքով սահմանված կարգով հաստիքների կրճատման, այդ թվում՝ ստորաբաժանման լուծարման կամ հիվանդանոցային բուժման մեջ գտնվող պայմանագրային զինծառայողի՝ զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու կամ պայմանագրային զինծառայողին այլ պետական մարմիններ տեղափոխելու պատճառով զինվորական պաշտոնից ազատված և կադրերի տրամադրության տակ թողնված զինծառայողների համար պահպանվում է պաշտոնային դրույքաչափը՝ օրենքով սահմանված կադրերի (կադրային ստորաբաժանման) տրամադրության տակ թողնելու ժամանակահատվածում:»:

***Հոդված 5.***

Օրենքի 63-րդ հոդվածը լրացնել նոր 9.1-ին մասով՝

«9.1. Գերության մեջ հայտնված կամ ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած ճանաչված զինծառայողների, այդ թվում՝ կամավորական հիմունքներով մարտական գործողությունների մասնակիցների ընտանիքներին հատկացվում է ամենամսյա դրամական օգնություն՝ նվազագույն աշխատավարձի 200-ապատիկի չափով: Եթե օրենքով սահմանված կարգով ապացուցվել է զինծառայողի մեղքը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 299-րդ հոդվածի 1-ին մասով, 361-րդ հոդվածի 7-րդ մասով, 362-րդ հոդվածի 3-րդ մասով, 380-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով, 381-րդ կամ 382-րդ հոդվածներով նախատեսված հանցանքի կատարման մեջ՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով, սույն մասի համաձայն վճարված դրամական ապահովությունը հետ է գանձվում օրենքով սահմանված կարգով:»:

***Հոդված 6.***

Օրենքի 65-րդ հոդվածը լրացնել նոր 1.1-ին մասով՝

«1.1. Բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցում ստացող և օրենքով սահմանված կարգով կադրերի տրամադրության տակ թողնված (կադրերի ռեզերվում գրանցված) շահառուին բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցումը

շարունակում է վճարվել կադրերի տրամադրության տակ թողնելու (կադրերի ռեզերվում գրանցելու)՝ օրենքով սահմանված ամբողջ ժամկետի ընթացքում:»:

***Հոդված 7.***

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում 2020 թվականի հունվարի 01-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը (այդ թվում՝ շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողներին գերի ընկած ճանաչելու վերաբերյալ) ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 30 օրացուցային օրվա ընթացքում:

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# *Օ Ր Ե Ն Ք Ը*

# «ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.***

«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-154-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ գլխի վերնագիրը «ԿՈՐՑՆԵԼՈՒ» բառից հետո լրացնել «ԿԱՄ ԳԵՐԻ ԸՆԿՆԵԼՈՒ» բառերով:

***Հոդված 2.***

Օրենքը լրացնել նոր 30.1-ին հոդվածով՝

«**Հոդված 30.1. Գերի ընկնելու դեպքում նպաստի իրավունքը**

1. Սույն օրենքի 2-րդ հոդվածի իմաստով նպաստի իրավունք ունեցող անձի գերի ընկնելու դեպքում այդ անձի ընտանիքը ձեռք է բերում սույն հոդվածով նախատեսված նպաստի իրավունք:

2. Սույն հոդվածով նպաստի իրավունք ունեն գերի ընկած անձի ամուսինը, զավակները և ծնողները:

3. Գերի ընկնելու դեպքում նշանակված նպաստը սահմանվում է գերության ամբողջ ժամանակահատվածի համար:

4. Սույն հոդվածով նախատեսված նպաստի իրավունքից չեն օգտվում անձի գերի ընկնելու հիմքով օրենքով նախատեսված այլ բնույթի աջակցություն ստացող անձիք՝ բացառությամբ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված արտոնության:»:

***Հոդված 3.***

Օրենքի 32-րդ հոդվածում՝

1) վերնագիրը «կորցնելու» բառից հետո լրացնել «կամ գերի ընկնելու» բառերով.

2) 1-ին մասում «կամ կերակրողին կորցնելու» բառերը փոխարինել «, կերակրողին կորցնելու կամ գերի ընկնելու» բառերով.

3) 2-րդ մասում «կամ կերակրողին կորցնելու» բառերը փոխարինել «, կերակրողին կորցնելու կամ գերի ընկնելու» բառերով.

4) 6-րդ մասը «կորցնելու» բառից հետո լրացնել «կամ գերի ընկնելու» բառերով.

5) 9-րդ մասում «29-31-րդ» թվերը փոխարինել «29-30-րդ և 31-րդ» թվերով:

***Հոդված 4.***

Օրենքի 32.1-ին հոդվածում՝

1) վերնագիրը «կորցնելու» բառից հետո լրացնել «կամ գերի ընկնելու» բառերով.

2) լրացնել նոր 2.1-ին մաս.

«2.1. Ընտանիքի անդամի գերի ընկնելու դեպքում նպաստը նշանակվում է իրավասու մարմնի՝ անձին գերի ընկած ճանաչելու օրվանից, եթե նպաստ նշանակելու դիմումը ներկայացվել է այդ օրվանից հետո՝ երեք ամսվա ընթացքում:».

3) 3.1-ին մասում «կամ կերակրողին կորցնելու» բառերը փոխարինել «, կերակրողին կորցնելու կամ գերի ընկնելու» բառերով:

***Հոդված 5.***

Օրենքի 33-րդ հոդվածում՝

1) վերնագիրը «կորցնելու» բառից հետո լրացնել «կամ գերի ընկնելու» բառերով.

2) 1-ին մասը «կորցնելու» բառից հետո լրացնել «կամ գերի ընկնելու» բառերով.

3) 1-ին մասը լրացնել նոր 2.1-ին կետով.

«2.1) գերությունից ազատվելու դեպքում.».

4) 1-ին մասը լրացնել նոր 8.1-ին կետով.

«8.1) գերի ընկած անձի նկատմամբ պետական դավաճանության համար՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտի առկայության դեպքում.».

5) 1-ին մասի 11-րդ կետը «դեպքում» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենքի 30.1-ին հոդվածով նախատեսված նպաստը ստանալու դեպքի»:

***Հոդված 6.***

Օրենքի 34-րդ հոդվածում՝

1) վերնագրում «կորցնելու» բառից հետո լրացնել «կամ գերի ընկնելու» բառերով.

2) 1-ին մասը «կորցնելու» բառից հետո լրացնել «կամ գերի ընկնելու» բառերը:

***Հոդված 7.***

Օրենքի 35-րդ հոդվածը լրացնել նոր 2.1-ին մասով՝

«2.1. Գերի ընկած անձի՝ գերության կամ գերությունից ազատվելուց հետո մեկ տարվա ընթացքում գերության ժամանակ ստացված խեղումների հետևանքով մահանալու դեպքում նպաստառուին վճարվում է թաղման նպաստ:»:

***Հոդված 8.***

Օրենքի 36-րդ հոդվածում՝

1) վերնագիրը «կորցնելու» բառից հետո լրացնել «կամ գերի ընկնելու» բառերով.

2) 1-ին մասը «կորցնելու» բառից հետո լրացնել «կամ գերի ընկնելու» բառերով:

***Հոդված 9.***

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում 2020 թվականի հունվարի 01-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 30 օրացուցային օրվա ընթացքում:

# *Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ու Մ*

# «ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ադրբեջանի Հանրապետության կողմից 2020թ. սեպտեմբերի 27-ից Արցախի Հանրապետության նկատմամբ սանձազերծված պատերազմի ընթացքում ի հայտ եկան զինվորական ծառայության հետ կապված հարաբերությունները կարգավորող «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ «Օրենք») առկա որոշ իրավական բացեր և թերի կարգավորումներ:

Օրենքը, սահմանելով պայմանագրային զինծառայողին պաշտոնից ազատելու և պետական լիազոր մարմնի կադրերի (կադրային ստորաբաժանման) տրամադրության տակ թողնելու հիմքերը, չի նախատեսում ռազմական դրության ժամանակահատվածում հատուկ կարգավորումներ այն զինծառայողների իրավական կարգավիճակի մասին, որոնց գտնվելու վայրի վերաբերյալ պետական լիազոր մարմինը տեղեկությունների չի տիրապետում: Փաստացի, Օրենքի գործող իրավակարգավորումների պարագայում որպես պատերազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած զինծառայողին պաշտոնից ազատելու իրավական հիմք կարող է ծառայել Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, որի համաձայն՝ զինծառայողն ազատվում է զբաղեցրած պաշտոնից և թողնվում է կադրերի տրամադրության տակ 1 ամսից ավել ժամկետով անհարգելի պատճառով ծառայության չներկայանալու դեպքերում: Գիտակցելով, որ ծառայության չներկայանալու, հետևաբար՝ ծառայողական պարտականությունների չկատարման բոլոր դեպքերը օրենսդրի կողմից անհարգելի ճանաչելը հետապնդել է հնարավոր չարաշահումներից խուսափելու նպատակ (օրինակ՝ ռազմական դրության ժամանակ դասալքության դիմած զինծառայողների արարքին համապատասխան իրավական գնահատական տալու անհրաժեշտություն), միևնույն ժամանակ ***անընդունելի է ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած զինծառայողներին անհարգելի պատճառներով ծառայությունից խուսափող դիտարկելը:***

Վերոշարադրյալ հանգամանքը հաշվի առնելով և ելնելով ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած զինծառայողների իրավական կարգավիճակը սահմանելու անհրաժեշտությունից՝ նախագծով առաջարկվում է որպես պայմանագրային զինծառայողներին զբաղեցրած

պաշտոնից ազատելու հիմք նախատեսել ռազմական գործողությունների կապակցությամբ զինծառայողի անհայտ կորած ճանաչվելու դեպքերը: Ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած զինծառայողների իրավական կարգավիճակի հստակեցումը կարևոր է նաև պատերազմական ակտիվ գործողությունների ժամանակ անհայտ կորած զինծառայողի, այդ թվում՝ հրամանատարական պաշտոն զբաղեցնող, հաստիքն արագ համալրելու անհրաժեշտությամբ, ինչն անհնար է առանց նրան զբաղեցրած պաշտոնից ազատելու:

Օրենքի գործող խմբագրությամբ՝ գերության մեջ գտնվելու պատճառով զինվորական պաշտոնից ազատված և կադրերի տրամադրության տակ թողնված զինծառայողների համար պահպանվում է պաշտոնային դրույքաչափը, սակայն վերջիններիս պաշտոնային դրույքաչափը վճարվում է միայն այն դեպքում, երբ զինծառայողի կողմից գերության մեջ գտնվելու փաստի կապակցությամբ անցկացված ծառայողական քննության արդյունքում հիմնավորվում է, որ գերության մեջ հայտնվելը զինծառայողի՝ զորամասը կամ ծառայության վայրը կամ մարտադաշտն ինքնակամ թողնելու և (կամ) կամովին գերի հանձնվելու հետևանք չէ: ***Օրենքի նման կարգավորման պարագայում խաթարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (այսուհետ՝ «Սահմանադրություն») ամրագրված անմեղության կանխավարկածի էությունը, քանի որ անձի, տվյալ դեպքում՝ զինծառայողի իրավունքները սահմանափակվում են նախքան վերջինիս կողմից իրավախախտում (հանցագործություն) կատարելու փաստի՝ օրենքով սահմանված ընթացակարգերի պահպանմամբ հաստատումը: Փաստացի, Օրենքի կարգավորումներով Հայաստանի Հանրապետության իրավական դաշտ է ներմուծվում մեղավորության կանխավարկածի ինստիտուտը, ինչը հակասում է Սահմանադրության 66-րդ հոդվածին:***

Սահմանադրության 66-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ՝ «Քրեական օրենսգիրք») 361-րդ հոդվածի 7-րդ մասով, 362-րդ հոդվածի 3-րդ մասով, 380-րդ հոդվածի 1-ին մասով և 381-րդ հոդվածով համապատասխանաբար քրեականացված են ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը, ռազմական դրության, պատերազմի

ժամանակ կամ մարտի պայմաններում դասալքությունը, մարտադաշտն ինքնակամ լքելը և կամովին գերի հանձնվելը:

«Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ «Կարգապահական կանոնագիրք») 27-րդ հոդվածի 4.1-րդ մասը սահմանում է, որ «(…) Ծառայողական քննության ընթացքում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում այդ մասին զեկուցվում է ծառայողական քննություն նշանակած հրամանատարին (պետին) և նրա հանձնարարությամբ տեղեկացվում է քրեական հետապնդում իրականացնող մարմնին՝ միաժամանակ ուղարկելով ծառայողական քննության նյութերի պատճենները, և ծառայողական քննությունը կասեցվում է: Տեղեկացման շրջանակներում քրեական հետապնդում իրականացնող մարմնի կողմից քրեական վարույթի հարուցումը մերժվելու դեպքում ծառայողական քննությունը վերսկսվում է մերժման որոշումն ստանալու օրվանից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, իսկ քրեական վարույթ հարուցվելու դեպքում ծառայողական քննությունը վերսկսվում է քրեական վարույթով ուժի մեջ մտած վերջնական որոշումն ստանալու օրվանից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:»:

Օրենքի կարգավորումներից բխում է, որ գերեվարված զինծառայողի պաշտոնական դրույքաչափի պահպանման համար ամեն պարագայում պարտադիր կարգով անցկացվելու է ծառայողական քննություն, իսկ ռազմական դրության ժամանակ, ղեկավարվելով Կարգապահական կանոնագրքի 27-րդ հոդվածի 4.1-ին հոդվածով, Քրեական օրենսգրքի վերոնշյալ հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշների առկայության դեպքում՝ ծառայողական քննությունը կասեցվում է և հարուցվում է քրեական գործ: Ընդ որում, ի տարբերություն ծառայողական քննության, ***քրեական վարույթի առավելագույն ժամկետ սահմանված չէ, հետևաբար՝ անձի իրավունքների սահմանափակումը տևելու է անորոշ ժամկետով նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենգրքի համաձայն՝ քրեական գործով վարույթը չի կարող ավարտվել առանց հանցագործության մեջ կասկածվող անձի լսված լինելու իրավունքն ապահովելու, այլ կերպ՝ հարուցված վարույթում պարտադիր է հանցագործության մեջ կասկածվող (մեղադրվող) զինծառայողի մասնակցությունը: Անձի լսված լինելու իրավունքի պահպանումը պարտադիր է նաև կարգապահական վարույթի շրջանակներում, և կարգապահական իրավախախտման կատարման մեջ կասկածվող զինծառայողի բացակայությունը ևս հիմք է կարգապահական***

***վարույթը կասեցնելու համար՝ հիմք ընդունելով Կարգապահական կանոնագրքի 27-րդ հոդվածի 4.1-րդ մասի դրույթն առ այն, որ վարույթը ենթակա է կասեցման ծառայողական քննության կատարմանը ժամանակավորապես խոչընդոտող անհաղթահարելի ուժերի առկայության դեպքում, ինչպիսին այս պարագայում կարող է համարվել իրավախախտման մեջ կասկածվող զինծառայողի բացակայությունը: Փաստացի, Օրենքի գործող կարգավորումների պարագայում գերեվարված կամ անհայտ կորած զինծառայողը համարվում է մեղավոր, հանցագործություն կատարած մինչև իր անմեղության ապացուցումը:***

Նման պարագայում բացարձակապես անընդունելի է գերեվարված անձին (նրա ընտանիքի անդամներին) զրկել դրամական ապահովությունից մինչև հարուցված վարույթով վերջնական որոշման կայացման պահը, որը կարող է բավականին երկար ժամանակ պահանջել: Օրենքի նմանաբնույթ կարգավորման պարագայում ***անկատար է մնում Օրենքով սահմանված կարգավորումների հետապնդած նպատակներից մեկը, այն է՝ զինծառայողի ընտանիքի անդամների սոցիալական կայունության ապահովումը:*** Այդ նպատակը մնում է նաև այն պատճառով, որ Օրենքը չի սահմանում գերեվարված զինծառայողին հասանելիք պաշտոնային դրույքաչափի՝ զինծառայողի ընտանիքի անդամներին տրամադրելու (հասանելի դարձնելու) իրավական ընթացակարգ: Օրենքով ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած զինծառայողների համար սոցիալական երաշխիքներ ևս սահմանված չեն:

Գերեվարված կամ անհայտ կորած զինծառայողների ընտանիքների անդամների սոցիալական վիճակի կայունությունն ապահովելու նպատակով՝ առաջարկվում է զինծառայողի ընտանիքի անդամներին (ամուսինը, զավակները և ծնողները) տրամադրել ամենամսյա դրամական օգնություն մինչև զինծառայողի՝ գերությունից վերադառնալը կամ գտնվելու վայրի պարզումը կամ իրավասու մարմնի կողմից օրենքով սահմանված բոլոր ընթացակարգերի պահպանմամբ հարուցված վարույթի շրջանակներում զինծառայողի՝ գերության մեջ հայտնվելը կամ անհայտ կորելը զորամասը կամ ծառայության վայրը կամ մարտադաշտն ինքնակամ թողնելու և (կամ) կամովին գերի հանձնվելու հետևանք լինելու հանգամանքի ապացուցումը:

Նախագծով առաջարկվում է նաև զինծառայողների համար օրենքի մակարդակով նախատեսել լրացուցիչ սոցիալական երաշխիք, որի համաձայն՝ պետական լիազոր մարմնի կարդային ստորաբաժանման տրամադրության տակ մնացած զինծառայողներին օրենքով սահմանված կարգով հատկացվող բնակելի տարածության վարձակալության դիմաց հատկացվող դրամական

փոխհատուցումը պահպանվում է (կադրերի ռեզերվում գրանցելու)՝ օրենքով սահմանված ամբողջ ժամկետի ընթացքում:

Ռազմական գործողությունների ընթացքում գերեվարվում են նաև քաղաքացիական անձիք, սակայն գործող օրենսդրությունը նրանց գերու կարգավիճակ տալու ընթացակարգ և ըստ այդմ նաև սոցիալական երաշխիքներ չի նախատեսում: Այս բացը լուծվում է նախագծերի սույն փաթեթով:

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**
**ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**Օ Ր Ե Ն Ք Ը**
**ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ**
**ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

**Հոդված 28. Շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողների արձակուրդը և բուժման մեջ գտնվելը**

1. Շարքային կազմի պարտադիր զինծառայողներին տրվում են հետևյալ արձակուրդները.

1) հիմնական.

2) լրացուցիչ.

3) հիվանդության պատճառով (վերականգնողական).

4) ամսական:

2. Սպայական կազմի պարտադիր զինծառայողներին տրվում են հետևյալ արձակուրդները.

1) հերթական.

2) լրացուցիչ.

3) հիվանդության պատճառով (վերականգնողական):

3. Շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողներին սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված արձակուրդ տալու դեպքում տրվում է նաև արձակուրդի անցկացման վայր մեկնելու և այնտեղից վերադառնալու համար անհրաժեշտ ժամանակ՝ մինչև երկու օրացուցային օր ընդհանուր ժամկետով:

4. Շարքային կազմի պարտադիր զինծառայողներին հիմնական արձակուրդ տրվում է ծառայության ընթացքում մեկ անգամ՝ ոչ պակաս, քան հինգ ամսվա օրացուցային ծառայության դեպքում, զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարի (պետի) կողմից՝ օրացուցային տարվա համար սահմանված արձակուրդների տրման ժամանակացույցի համաձայն: Արձակուրդների տրման ժամանակացույցը կազմելիս արձակուրդի տրման հերթականությունը որոշվում է՝ հաշվի առնելով զորամասի (զինվորական կառավարման մարմնի) մարտական պատրաստության ապահովման շահերը և զինծառայողի բարեխիղճ ծառայությունը: Հիմնական արձակուրդ տրվում է՝

1) շարքային կազմի զինվորական կոչում ունեցող զինծառայողներին՝ 10 օրացուցային օր.

2) կրտսեր ենթասպայական կազմի զինվորական կոչում ունեցող զինծառայողներին՝ 15 օրացուցային օր:

5. Սպայական կազմի պարտադիր զինծառայողներին յուրաքանչյուր տարվա համար հերթական արձակուրդը տրվում է՝ յուրաքանչյուր լրիվ ծառայած ամսվա համար երկու և կես օր հաշվարկով:

6. Շարքային կազմի պարտադիր զինծառայողներին լրացուցիչ արձակուրդ տրվում է հինգ օրացուցային օր տևողությամբ՝

1) զինվորական ուսման կամ ծառայության բարձր ցուցանիշների համար՝ խրախուսման կարգով.

2) ընտանեկան պայմաններից ելնելով՝ զինծառայողին երեխա ծնվելու կամ նրա ընտանիքի անդամի (կին, երեխա, հայր, մայր, քույր, եղբայր, տատ, պապ) ամուսնության, ծանր հիվանդության կամ մահվան դեպքերում.

3) սույն օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պայմաններ ունեցողներին՝ վեց ամիսը մեկ անգամ:

7. Սպայական կազմի պարտադիր զինծառայողներին լրացուցիչ արձակուրդ տրվում է ընտանեկան պայմաններից ելնելով՝ զինծառայողին երեխա ծնվելու կամ նրա ընտանիքի անդամի (կին, երեխա, հայր, մայր, քույր, եղբայր, տատ, պապ) ամուսնության, ծանր հիվանդության կամ մահվան դեպքերում՝ հինգ օրացուցային օր տևողությամբ:

8. Շարքային կամ սպայական կազմերի պարտադիր զինծառայողներին հիվանդության պատճառով (վերականգնողական) արձակուրդ տրվում է զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարի (պետի) կողմից՝ սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված բուժման մեջ գտնվելու կամ վերականգնողական ժամանակահատվածի համար՝ բուժում իրականացնող համապատասխան ռազմաբժշկական հաստատության կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի (այսուհետ՝ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողով) տեղեկանքի հիման վրա:

9. Շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողներին առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու հիմքով զինվորական ծառայությունից արձակելու ժամանակ բուժում իրականացնող համապատասխան ռազմաբժշկական հաստատության պետի կողմից զինծառայողին կարող է տրվել արձակուրդ մինչև 30 օրացուցային օր տևողությամբ՝ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

10. Հիմնական կամ հերթական կամ լրացուցիչ արձակուրդի ընթացքում հիվանդացած շարքային կամ սպայական կազմերի պարտադիր զինծառայողի հիվանդության ժամանակահատվածը չի հաշվարկվում տրված արձակուրդի ժամկետում:

11. Շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողների բուժման մեջ գտնվելու ժամանակահատվածը չի կարող գերազանցել անընդմեջ 90 օրացուցային օրը: Բուժման ավարտից հետո շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողները ենթակա են ռազմաբժշկական փորձաքննության կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից, որի արդյունքներով կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովը կարող է երկարաձգել բուժման մեջ գտնվելու ժամկետը՝ մինչև 30 օրացուցային օր, կամ սահմանել վերականգնողական ժամկետ՝ մինչև 30 օրացուցային օր: Երկարաձգված բուժման կամ վերականգնողական ժամկետի ավարտից հետո շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողները կրկին ենթակա են ռազմաբժշկական փորձաքննության: Ռազմաբժշկական փորձաքննության արդյունքներով կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից տրվում է զինծառայողի առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություն, որը ներառում է զինծառայողի առողջական վիճակի ամփոփ նկարագրությունը, զինվորական ծառայությանը պիտանիության աստիճանը, ինչպես նաև զինվորական ծառայության պայմանները, որոնք հակացուցված են զինծառայողի

առողջական վիճակին: Զինծառայողի առողջական վիճակի եզրակացության մեջ, կախված զինվորական ծառայությանը նրա պիտանիության աստիճանից, նշվում են՝

1) պիտանի է զինվորական ծառայության համար.

2) պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար.

3) սահմանափակումով պիտանի է զինվորական ծառայության համար.

4) կարիք ունի ծառայողական պարտականություններից մասնակի ազատման՝ մինչև 15 օր ժամկետով.

5) ոչ պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար.

6) ոչ պիտանի է զինվորական ծառայության համար:

12. Ամսական արձակուրդ տրվում է սույն օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասում նշված շարքային կազմի պարտադիր զինծառայողներին՝ ծառայության վեց ամիսը լրանալուց հետո՝ յուրաքանչյուր ամսվա ընթացքում յոթ օրացուցային օր ժամկետով: Սույն մասում նշված շարքային կազմի պարտադիր զինծառայողներին սույն հոդվածով սահմանված հերթական արձակուրդը տրվում է մինչև սույն օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասում նշված պայմանագրի ուժի մեջ մտնելը, իսկ լրացուցիչ արձակուրդ տրվում է միայն սույն հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետում նշված դեպքերում:

13. Սույն հոդվածով սահմանված արձակուրդների տրման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով:

**Հոդված 28.1. Շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողների՝ ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորելը կամ գերի ընկնելը**

1. Շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողները ճանաչվում են ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած՝ սույն օրենքի 40-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված կարգով կամ գերի ընկած՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Հոդված 40. Պայմանագրային զինծառայողին զինվորական պաշտոնից ազատելը**

1. Պայմանագրային զինծառայողը զինվորական պաշտոնից ազատվում է՝

1) այլ պաշտոնի նշանակվելու դեպքում.

2) հաստիքների կրճատման, այդ թվում՝ ստորաբաժանման լուծարման պատճառով.

3) ատեստավորման արդյունքներով զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանելու կամ կարգապահական տույժի կարգով.

4) զինծառայողի նկատմամբ քրեական հետապնդում հարուցվելիս և կալանքը որպես խափանման միջոց ընտրվելիս կամ հարուցված քրեական հետապնդման շրջանակներում նրա պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման որոշում կայացնելիս.

5) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով կալանքի կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու արգելքի ձևով պատժի դատապարտվելու դեպքում.

6) հիվանդանոցային բուժման մեջ գտնվող պայմանագրային զինծառայողի՝ զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելիս.

7) սույն օրենքի 44-րդ հոդվածով նախատեսված դեպքում.

8) մեկ ամսից ավելի ժամկետով անհարգելի պատճառով ծառայության չներկայանալու դեպքում.

8.1) ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած ճանաչվելու դեպքում.

9) գերության մեջ գտնվելու դեպքում.

10) վեց ամիսը գերազանցող ժամկետով ռազմաուսումնական (կամ առկա ուսուցմամբ ոստիկանական ուսումնական) հաստատություններ, համապատասխան սպայական կամ սերժանտական դասընթացներ, ասպիրանտուրա, դոկտորանտուրա, կլինիկական օրդինատուրա կամ ինտերնատուրա ընդունվելու կամ Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության ռազմաուսումնական կամ այլ հաստատությունում վերապատրաստման գործուղվելու դեպքում.

11) զինվորական ծառայությունից արձակվելու դեպքում:

1.1. Պայմանագրային զինծառայողը պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով ճանաչվում է ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած, եթե զորամասում կամ ծառայության վայրում կամ մարտադաշտում նրա գտնվելու վայրի մասին առնվազն երեք օր տեղեկություններ առկա չեն: Սույն մասով սահմանված կարգով զինծառայողին անհայտ կորած ճանաչելու հետևանքով չեն առաջանում քաղաքացուն քաղաքացիական դատավարության կարգով անհայտ բացակայող ճանաչելու արդյունքում վրա հասնող իրավական հետևանքները:

2. Պայմանագրային զինծառայողին զինվորական պաշտոնից ազատում է տվյալ պաշտոնին նշանակելու իրավասություն ունեցող հրամանատարը (պետը):

3. Բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոն զբաղեցնող պայմանագրային զինծառայողին զինվորական պաշտոնից ազատումն իրականացվում է սույն օրենքի 35.1-ին հոդվածով բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնի նշանակելու համար սահմանված կարգով: Բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնից ազատումը կարող է իրականացվել անկախ այն հանգամանքից՝ առկա են սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքեր, թե ոչ:

***(40-րդ հոդվածը խմբ., լրաց. 21.06.18 ՀՕ-344-Ն)***

**Հոդված 41. Պայմանագրային զինծառայողին կադրերի տրամադրության տակ թողնելը**

1. Պայմանագրային զինծառայողները թողնվում են պետական լիազոր մարմնի կադրերի (կադրային ստորաբաժանման) տրամադրության տակ սույն օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դեպքերում՝ երկու ամսից ոչ ավելի, իսկ հղիության և ծննդաբերության կամ երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող պայմանագրային զինծառայողի հաստիքը կրճատվելու դեպքում՝ մինչև արձակուրդի ավարտը.

2) 4-րդ կետով սահմանված դեպքում՝ մինչև ընտրված խափանման միջոցը փոխելու կամ պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման որոշումը վերացնելու օրվան հաջորդող 30-րդ օրը, բայց ոչ ավելի, քան պայմանագրի ժամկետը լրանալը, իսկ զինծառայողի հետախուզման մեջ գտնվելու դեպքում՝ վեց ամսից ոչ ավելի, բացառությամբ ռազմաուսումնական հաստատություններ ավարտած զինծառայողների, որոնց պայմանագրով նախատեսված ծառայության ժամկետը չի ավարտվել.

3) 5-րդ կետով սահմանված՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով կալանքի ձևով պատժի դատապարտվելու դեպքում՝ պատժի կրման ամբողջ ժամկետով.

4) 6-րդ կետով սահմանված դեպքում (ներառյալ՝ արձակումը ձևակերպելու ժամկետը)՝ 1 ամսից ոչ ավելի.

5) 7-րդ կետով սահմանված դեպքում՝ երեք ամսից ոչ ավելի.

6) 8-րդ և 8.1-ին կետերով սահմանված դեպքերում ~~8-րդ կետով սահմանված դեպքում~~՝ մինչև վերադառնալը կամ օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչվելը.

7) 9-րդ կետով սահմանված դեպքում՝ մինչև ազատվելը.

8) 10-րդ կետով սահմանված դեպքում՝ մինչև ուսումնառության և սույն օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հերթական արձակուրդի ավարտը:

1.1. Սույն օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքում պայմանագրային զինծառայողը պետական լիազոր մարմնի կադրերի (կադրային ստորաբաժանման) տրամադրության տակ թողնվում է երկու ամսից ոչ ավելի ժամկետով:

2. Պայմանագրային զինծառայողներին կադրերի (կադրային ստորաբաժանման) տրամադրության տակ թողնելու կարգը սահմանում է պետական լիազոր մարմնի ղեկավարը:

**Հոդված 61. Զինծառայողների դրամական ապահովությունը**

1. Զինծառայողների դրամական ապահովությունը զինծառայողների նյութական ապահովության և նրանց կողմից ծառայողական պարտականությունների կատարումը խթանելու միջոց է:

2. Զինծառայողների դրամական ապահովությունն իրականացվում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված սկզբունքներին և հիմնական պայմաններին համապատասխան: Սույն հոդվածով սահմանված՝ զինծառայողների դրամական ապահովությանը վերաբերող դրույթները տարածվում են նաև քրեակատարողական ծառայության և փրկարար ծառայության ծառայողների վրա՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համապատասխան ոլորտները կարգավորող օրենքների պահանջներին համապատասխան:

3. Զորակոչի միջոցով պարտադիր զինվորական ծառայություն անցնող շարքային կազմի զինծառայողների (ներառյալ՝ ծառայության ընթացքում կրտսեր ենթասպայական կազմի զինվորական կոչում ստացած և պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր չկնքած զինծառայողների) և սույն օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պայմանագիր կնքած զինծառայողների, ինչպես նաև ռազմաուսումնական կամ ոստիկանական ուսումնական հաստատություններում սովորող կուրսանտների ու սովորողների դրամական ապահովության կարգը և չափերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Զինծառայողների դրամական ապահովությունը բաղկացած է զինվորական (այլ հատուկ) կոչումներին համապատասխանող զինվորական պաշտոնների դասակարգման

խմբերին և զինվորական ծառայության ստաժներին համարժեք պաշտոնային դրույքաչափերից (այսուհետ՝ պաշտոնային դրույքաչափ), օրենքով սահմանված կարգով տրվող հավելումներից և լրավճարներից: Սույն հոդվածով զինծառայողների դրամական ապահովությունը սահմանող դրույթները տարածվում են նաև զորակոչի միջոցով պարտադիր զինվորական ծառայություն անցնող սպայական կազմի և զորահավաքային զորակոչի միջոցով զինվորական ծառայություն անցնող զինծառայողների վրա:

5. Զինծառայողների պաշտոնային դրույքաչափը որոշվում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխան հավելվածով սահմանված պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցների և պետական պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի արտադրյալով: Պետական պաշտոն զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը սահմանվում է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով:

6. Զինվորական ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխան հավելվածով սահմանված՝ տվյալ պաշտոնի խմբի սանդղակի գործակիցների միջոցով:

7. Յուրաքանչյուր սանդղակ բաղկացած է յոթ մակարդակից, որոնցից յուրաքանչյուրում սահմանվում է նվազագույն պաշտոնային դրույքաչափից մինչև առավելագույնը հաշվարկելու՝ բազային աշխատավարձի նկատմամբ բազմապատիկ գործակից:

8. Առաջին անգամ զինվորական պաշտոնում նշանակված անձի պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է տվյալ պաշտոնի խմբի սանդղակում՝ ունեցած զինվորական ծառայության ստաժին համապատասխանող գործակցի միջոցով:

9. Նախորդ պաշտոնի նկատմամբ սահմանված կարգով ավելի բարձր կամ ցածր պաշտոնի նշանակված զինծառայողի պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է նոր պաշտոնի խմբի սանդղակում՝ ունեցած զինվորական ծառայության ստաժին համապատասխանող գործակցի միջոցով:

10. Զինծառայողին զինվորական ծառայության ստաժի համար սահմանվում է պաշտոնային դրույքաչափի բնականոն աճ՝ պաշտոնային դրույքաչափի նվազագույն մեծությունից առավելագույնը:

11. Պաշտոնային դրույքաչափի բնականոն աճը յուրաքանչյուր սանդղակի ներսում իրականացվում է հետևյալ սխեմայով.

1) 1-7-րդ մակարդակների համար սահմանվում է պաշտոնային դրույքաչափի միավոր ավելացում՝ կախված զինվորական ծառայության ստաժից.

2) մինչև 2 տարվա զինվորական ծառայության ստաժի դեպքում պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է տվյալ պաշտոնի խմբին համապատասխանող սանդղակի 1-ին մակարդակի գործակցի միջոցով.

3) 2-ից մինչև 5 տարվա զինվորական ծառայության ստաժի դեպքում պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է տվյալ պաշտոնի խմբին համապատասխանող սանդղակի 2-րդ մակարդակի գործակցի միջոցով.

4) 5-ից մինչև 10 տարվա զինվորական ծառայության ստաժի դեպքում պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է տվյալ պաշտոնի խմբին համապատասխանող սանդղակի 3-րդ մակարդակի գործակցի միջոցով.

5) 10-ից մինչև 15 տարվա զինվորական ծառայության ստաժի դեպքում պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է տվյալ պաշտոնի խմբին համապատասխանող սանդղակի 4-րդ մակարդակի գործակցի միջոցով.

6) 15-ից մինչև 20 տարվա զինվորական ծառայության ստաժի դեպքում պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է տվյալ պաշտոնի խմբին համապատասխանող սանդղակի 5-րդ մակարդակի գործակցի միջոցով.

7) 20-ից մինչև 25 տարվա զինվորական ծառայության ստաժի դեպքում պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է տվյալ պաշտոնի խմբին համապատասխանող սանդղակի 6-րդ մակարդակի գործակցի միջոցով.

8) 25 և ավելի տարվա զինվորական ծառայության ստաժի դեպքում պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է տվյալ պաշտոնի խմբին համապատասխանող սանդղակի 7-րդ մակարդակի գործակցի միջոցով.

9) սանդղակի 7-րդ մակարդակից պաշտոնային դրույքաչափը մնում է անփոփոխ:

12. Պաշտոնային դրույքաչափի բնականոն աճի հերթական միավոր ավելացումն իրականացվում է սահմանված զինվորական ծառայության ստաժը լրանալուն հաջորդող ամսվա 1-ից:

13. Սույն օրենքով սահմանված կարգով հաստիքների կրճատման, այդ թվում՝ ստորաբաժանման լուծարման կամ հիվանդանոցային բուժման մեջ գտնվող պայմանագրային զինծառայողի՝ զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու կամ պայմանագրային զինծառայողին այլ պետական մարմիններ տեղափոխելու պատճառով զինվորական պաշտոնից ազատված և կադրերի տրամադրության տակ թողնված զինծառայողների համար պահպանվում է պաշտոնային դրույքաչափը՝ օրենքով սահմանված կադրերի (կադրային ստորաբաժանման) տրամադրության տակ թողնելու ժամանակահատվածում: ~~13. Սույն օրենքով սահմանված կարգով հաստիքների կրճատման, այդ թվում՝ ստորաբաժանման լուծարման կամ հիվանդանոցային բուժման մեջ գտնվող պայմանագրային զինծառայողի՝ զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու կամ պայմանագրային զինծառայողին այլ պետական մարմիններ տեղափոխելու կամ գերության մեջ գտնվելու պատճառով զինվորական պաշտոնից ազատված և կադրերի տրամադրության տակ թողնված զինծառայողների համար պահպանվում է պաշտոնային դրույքաչափը՝ օրենքով սահմանված կադրերի (կադրային ստորաբաժանման) տրամադրության տակ թողնելու ժամանակահատվածում: Սույն մասի համաձայն՝ գերության մեջ գտնվող զինծառայողի համար պաշտոնային դրույքաչափը պահպանվում է, և դրա վճարումն իրականացվում է պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով սահմանված կարգով միայն այն դեպքում, երբ զինծառայողի կողմից գերության մեջ գտնվելու փաստի կապակցությամբ անցկացված ծառայողական քննության արդյունքում հիմնավորվում է, որ գերության մեջ~~

~~հայտնվելը զինծառայողի՝ զորամասը կամ ծառայության վայրը կամ մարտադաշտն ինքնակամ թողնելու և (կամ) կամովին գերի հանձնվելու հետևանք չէ, կամ եթե առկա չէ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 382-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված քրեական վարույթ:~~

14. Ռազմաուսումնական կամ ոստիկանական ուսումնական հաստատություններն ավարտած և սկզբնական սպայական զինվորական կոչում ստացած զինծառայողների համար՝ մինչև պաշտոնի նշանակումը, իսկ ռազմաբժշկական ուսումնական հաստատություններն ավարտած և ինտերնատուրայում կամ օրդինատուրայում կամ պետական լիազոր մարմնի պատվերով ինտերնատուրայի կրթական ծրագրով սովորելու հրամանագրված զինծառայողների համար՝ նաև ինտերնատուրայում և օրդինատուրայում սովորելու ընթացքում, պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված սպայական կազմի նվազագույն խմբի 2-րդ մակարդակի գործակցով:

15. Արձակուրդում (բացառությամբ երեխայի խնամքի համար արձակուրդի) կամ գործուղման մեջ գտնվող զինծառայողների, ինչպես նաև սույն օրենքով սահմանված կարգով վեց ամիսը գերազանցող ժամկետով ռազմաուսումնական (կամ առկա ուսուցմամբ ոստիկանական ուսումնական) հաստատություններ, համապատասխան սպայական կամ սերժանտական դասընթացներ, ասպիրանտուրա, դոկտորանտուրա, կլինիկական օրդինատուրա կամ ինտերնատուրա ընդունվելու կամ Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության ռազմաուսումնական կամ այլ հաստատությունում վերապատրաստման գործուղվելու պատճառով զինվորական պաշտոնից ազատված և կադրերի տրամադրության տակ թողնված զինծառայողների համար պահպանվում է դրամական ապահովությունը՝ արձակուրդում կամ գործուղման մեջ գտնվելու կամ օրենքով սահմանված կադրերի (կադրային ստորաբաժանման) տրամադրության տակ թողնելու ժամանակահատվածում:

16. Զինվորական ծառայությունից արձակվող և զինվորական ծառայության ընթացքում չօգտագործված արձակուրդ ունեցող զինծառայողներին տրվում է փոխհատուցում՝ ոչ ավելի, քան զինվորական ծառայությունից արձակվելու և դրան նախորդող երկու տարվա չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափով: Սույն մասում նշված դեպքում չօգտագործված արձակուրդի օրերի հաշվարկում չեն ներառվում զինծառայողի՝ սույն օրենքի համաձայն՝ զինվորական ծառայության ընդհանուր ժամկետում չներառվող ժամանակահատվածների օրերը:

17. Անհարգելի պատճառով ծառայության չներկայացած օրերի համար զինծառայողներին դրամական ապահովություն չի հաշվարկվում:

18. Զինծառայողներին տրվող հավելումը դրամական ապահովության բաղկացուցիչ մաս է, որը սահմանվում է պաշտոնային դրույքաչափի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ կամ բացարձակ դրամական մեծությամբ և տրվում է՝ ելնելով զինվորական ծառայության առանձնահատկություններից: Զինծառայողներին տրվող հավելումների դեպքերը, չափերն ու տրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

19. Ծառայողական գործունեության գնահատման և (կամ) հատուկ առաջադրանքների և (կամ) աշխատանքների որակյալ կատարման համար զինծառայողներին կարող են տրվել պարգևատրումներ՝ օրենքով սահմանված կարգով:

**Հոդված 63. Զինծառայողներին տրվող դրամական օգնությունները**

1. Երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի անցնելու կամ զինվորական ծառայության մեջ գտնվելու սահմանային տարիքը կամ պայմանագրի ժամկետը լրանալու կամ առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու կամ հաստիքների կրճատման, այդ թվում՝ ստորաբաժանման լուծարման կապակցությամբ զինվորական ծառայությունից արձակվելիս զինծառայողներին Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափերով տրվում է դրամական օգնություն՝

1) 3 տարուց մինչև 10 տարի զինվորական ծառայության համար.

2) 10 տարուց մինչև 15 տարի զինվորական ծառայության համար.

3) 15 տարուց մինչև 20 տարի զինվորական ծառայության համար.

4) 20 տարուց մինչև 25 տարի զինվորական ծառայության համար.

5) 25 և ավելի տարի զինվորական ծառայության համար:

2. Մինչև երեք տարվա զինվորական ծառայության ստաժ ունեցող և առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու կապակցությամբ պայմանագրային զինծառայողներին, ինչպես նաև զորակոչի միջոցով պարտադիր զինվորական ծառայություն անցնող սպայական կազմին օրենքով սահմանված ժամկետը լրանալու կապակցությամբ կամ առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայությունից արձակելիս հաշվարկվում է դրամական օգնություն՝ վերջին զբաղեցրած զինվորական ծառայության պաշտոնի պաշտոնային դրույքաչափի չափով:

3. Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ժամկետը լրանալու կապակցությամբ, ինչպես նաև առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու կամ ընտանեկան պայմաններից ելնելով ժամկետից շուտ զինվորական ծառայությունից արձակվելիս շարքային կամ կրտսեր ենթասպայական կազմերի պարտադիր ժամկետային զինծառայողների համար հաշվարկվում է դրամական օգնություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափով, իսկ նույն կազմից այն զինծառայողի համար, որի ծնողները (այդ թվում՝ միայնակ մոր կամ միայնակ հոր կարգավիճակ ունեցող ծնողը) մահացած են, դրամական օգնությունը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափի քսանապատիկի չափով: Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում օրենքով սահմանված կարգով պայմանագրային զինվորական ծառայության անցած զինծառայողների պարտադիր զինվորական ծառայության ժամանակահատվածը հաշվարկվում է սույն հոդվածի 1-ին մասի համաձայն դրամական օգնության իրավունք տվող պայմանագրային զինվորական ծառայության համապատասխան ստաժում:

4. Սույն օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զինծառայողներին զինվորական ծառայության ժամկետը լրանալու և (կամ) առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչելու հիմքով ժամկետից շուտ զինվորական

ծառայությունից արձակելիս հաշվարկվում է պատվովճար: Պատվովճարի չափը, տրման կարգը և պատվովճարի տնօրինման ուղղությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Նախկինում զինվորական ծառայությունից արձակված և հետագայում օրենքով սահմանված կարգով կրկին զինվորական ծառայության անցած զինծառայողներին սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում զինվորական ծառայությունից հերթական անգամ արձակելիս դրամական օգնությունը հաշվարկվում է արձակման օրվա դրությամբ դրամական օգնության իրավունք տվող զինվորական ծառայության լրիվ ստաժի (առանց պարտադիր զինվորական ծառայության ստաժի հաշվարկի) և զինվորական ծառայության լրիվ ստաժի մեջ առանձին ժամանակահատվածների համար սահմանված դրամական օգնության չափի տարբերության չափով: Ընդ որում, հերթական անգամ հաշվարկվող և նախկինում հաշվարկված դրամական օգնությունների հանրագումարը չի կարող գերազանցել ծառայության ընդհանուր ստաժի տվյալ խմբի համար սահմանված չափը: Դրամական օգնության իրավունք տվող հիմքով նախկինում զինվորական ծառայությունից արձակված, սակայն դրամական օգնություն չստացած և հետագայում օրենքով սահմանված կարգով կրկին զինվորական ծառայության անցած զինծառայողներին հերթական անգամ դրամական օգնության իրավունք տվող հիմքով զինվորական ծառայությունից արձակելիս նախկին զինվորական ծառայության ժամանակահատվածի համար դրամական օգնությունը հաշվարկվում է նախկին արձակման օրվա դրությամբ ունեցած զինվորական ծառայության ստաժի համար տվյալ օրվա դրությամբ գործող օրենքով սահմանված չափերին և պայմաններին համապատասխան: Սույն հոդվածի 1-ին մասում չնշված և օրենքով սահմանված այլ հիմքով զինվորական ծառայությունից արձակված և հետագայում օրենքով սահմանված կարգով կրկին զինվորական ծառայության անցած զինծառայողներին սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում զինվորական ծառայությունից արձակելիս դրամական օգնություն հաշվարկվում է կրկին զինվորական ծառայության մեջ գտնվելու ժամանակահատվածին համապատասխան սահմանված չափով:

6. Զինվորական ծառայության ընթացքում դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտվելու կամ զինվորական կոչումից զրկվելու կապակցությամբ կամ կարգապահական տույժի կարգով զինվորական ծառայությունից արձակված և հետագայում օրենքով սահմանված կարգով արդարացված նախկին զինծառայողն օգտվում է դրամական օգնություն ստանալու իրավունքից զինվորական ծառայությունից արձակվելու օրվա դրությամբ ունեցած՝ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված զինվորական ծառայության ստաժի համար սահմանված չափով, եթե չի դիմել վերականգնվելու զինվորական ծառայության մեջ: Նշված դեպքում զինծառայողի զինվորական ծառայության ժամկետը՝ մինչև սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում զինվորական ծառայությունից արձակվելը, համարվում է անընդմեջ:

7. Պայմանագրի ժամկետը լրացող և օրենքով սահմանված կարգով զինվորական ծառայությունը շարունակելու համար նոր պայմանագիր կնքելու ցանկություն հայտնած շարքային կամ կրտսեր ենթասպայական կազմերի զինծառայողին իր ցանկությամբ տրվում է դրամական օգնություն՝ սույն հոդվածի 1-ին մասի համաձայն ունեցած զինվորական ծառայության ստաժին համապատասխան սահմանված չափով: Ընդ որում, սույն մասով սահմանված դրամական

օգնությունը համապատասխան ստաժի շրջանակներում տրվում է մեկ անգամ, ինչպես նաև դրա հաշվարկման համար կիրառվում են սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված կանոնները:

8. Ծառայության նոր վայր տեղափոխվելու դեպքում զինծառայողին (բացառությամբ պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցնող շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի զինծառայողների), ինչպես նաև նրա հետ տեղափոխվող ընտանիքի յուրաքանչյուր անդամին տարվա ընթացքում մեկ անգամ տրվում է նաև դրամական օգնություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափերով՝

1) նախկին և նոր ծառայության վայրերի հեռավորությունը 30-100 կիլոմետր լինելու դեպքում.

2) նախկին և նոր ծառայության վայրերի հեռավորությունը 100 կիլոմետրը գերազանցելու դեպքում: Ռազմաուսումնական հաստատություններն ավարտելուց հետո ծառայության նշանակված զինծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին սույն մասով նախատեսված դրամական օգնությունը հաշվարկվում և վճարվում է՝ հիմք ընդունելով նրանց մշտական բնակության և ծառայության վայրերի միջև եղած հեռավորությունը:

9. Զինծառայողներին (բացառությամբ պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցնող շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի զինծառայողների) տարվա ընթացքում մեկ անգամ տրվում է նաև դրամական օգնություն՝ պաշտոնային դրույքաչափի չափով՝

1) զինծառայողի ամուսնության կամ

2) տարերային աղետի հետևանքով զինծառայողին սեփականության իրավունքով պատկանող գույքին վնաս պատճառվելու կամ

3) զինծառայողի կամ նրա ընտանիքի անդամի երկարատև հիվանդության կամ

4) զինծառայողի ընտանիքի անդամի մահվան դեպքերում:

9.1. Գերության մեջ հայտնված կամ ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած ճանաչված զինծառայողների, այդ թվում՝ կամավորական հիմունքներով մարտական գործողությունների մասնակիցների ընտանիքներին հատկացվում է ամենամսյա դրամական օգնություն՝ նվազագույն աշխատավարձի 200-ապատիկի չափով: Եթե օրենքով սահմանված կարգով ապացուցվել է զինծառայողի մեղքը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 299-րդ հոդվածի 1-ին մասով, 361-րդ հոդվածի 7-րդ մասով, 362-րդ հոդվածի 3-րդ մասով, 380-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով, 381-րդ կամ 382-րդ հոդվածներով նախատեսված հանցանքի կատարման մեջ՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով, սույն մասի համաձայն վճարված դրամական ապահովությունը հետ է գանձվում օրենքով սահմանված կարգով:

10. Հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողներին, ծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներին սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված դեպքերում տարվա ընթացքում մեկ անգամ կարող է վճարվել միանվագ դրամական օգնություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափով:

11. Սույն հոդվածով սահմանված՝ զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների դրամական օգնությանը վերաբերող դրույթները տարածվում են նաև քրեակատարողական ծառայության և փրկարար ծառայության ծառայողների ու նրանց ընտանիքների անդամների վրա:

12. Սույն հոդվածի իմաստով՝ զինծառայողի ընտանիքի անդամ են համարվում ամուսինը, զավակները և ծնողները:

13. Սույն հոդվածով սահմանված դրամական օգնությունների վճարման կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

**Հոդված 65. Զինծառայողների բնակարանային ապահովությունը**

1. Պայմանագրային զինծառայողները ծառայության վայրում բնակարանային պայմանների բարելավման կարիք ունենալու դեպքում ապահովվում են ծառայողական բնակարաններով՝ պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով սահմանված կարգով: Ծառայության վայրում բնակարանային պայմանների բարելավման կարիք է համարվում ծառայության վայրի վարչական տարածքից առնվազն 30 կիլոմետր հեռավորությամբ սեփականության իրավունքով բնակելի տարածություն կամ նույն հեռավորությամբ մշտական (փաստացի) հաշվառման վայր չունենալը: Ծառայության վայրում ծառայողական բնակարանով չապահովվելու դեպքում այլ բնակելի տարածություն վարձակալելու դիմաց պայմանագրային զինծառայողներին վճարվում է դրամական փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափերով: Պայմանագրային զինծառայողին ծառայողական բնակելի տարածությամբ ապահովելիս կամ բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցում վճարելիս հաշվի են առնվում նաև նրա ընտանիքի հետևյալ անդամները.

1) ամուսինը (կինը) և 18 տարին չլրացած երեխաները.

2) համատեղ բնակվող՝ անգործունակ ճանաչված կամ մինչև 26 տարեկան ուսանող զավակները, ինչպես նաև համատեղ բնակվող՝ 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամություն ունեցող զավակները, եթե հաշմանդամություն ունեցող են ճանաչվել մինչև իրենց 18 տարին լրանալը:

1.1. Բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցում ստացող և օրենքով սահմանված կարգով կադրերի տրամադրության տակ թողնված (կադրերի ռեզերվում գրանցված) շահառուին բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցումը շարունակում է վճարվել կադրերի տրամադրության տակ թողնելու (կադրերի ռեզերվում գրանցելու)՝ օրենքով սահմանված ամբողջ ժամկետի ընթացքում.

2. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և պայմաններով սպայական և ավագ ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողները կարող են բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու կամ բնակելի տուն կառուցելու նպատակով օգտվել մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիպոտեկային վարկավորման պետական նպատակային ծրագրերից:

3. Առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողները և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքները, որոնք համապատասխանաբար կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու կամ զինծառայողի զոհվելու (մահանալու) օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում չունեն սեփականության իրավունքով բնակելի տարածություն կամ Հայաստանի Հանրապետության տարածքում ունեն սեփականության իրավունքով բնակելի տարածություն, որը, սակայն, 4-րդ

աստիճանի վթարային է և քանդման ենթակա, ինչպես նաև 1-ին խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողները, որոնք Հայաստանի Հանրապետության տարածքում ունեն սեփականության իրավունքով բնակելի տարածություն, սակայն նախկին զինծառայողի և սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ նրա ընտանիքի յուրաքանչյուր անդամի մասով բնակելի տարածության բնակելի մակերեսը կազմում է 5.5 քառակուսի մետրից պակաս՝ հաշվառվում են որպես բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող, և նրանց սեփականության իրավունքով անհատույց հատկացվում է բնակարան, կամ բնակարան ձեռք բերելու համար ստանում են անհատույց պետական ֆինանսական աջակցություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափերով: Սույն մասով սահմանված բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող չեն համարվում այն անձինք, որոնք զինծառայողի՝ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող ճանաչվելու կամ զոհվելու (մահանալու) օրվանից առաջ՝ հինգ տարվա ընթացքում, օտարել են սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածությունները կամ փոխել են սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածությունների օգտագործման նպատակային նշանակությունը կամ զինծառայողի՝ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող ճանաչվելու կամ զոհվելու (մահանալու) օրվա դրությամբ բնակվում են օրենքով սահմանված կարգով պետական գրանցում չստացած բնակելի տարածությունում կամ օրենքով սահմանված կարգով ժառանգության բացումից հետո բնակելի տարածության նկատմամբ ունեն ժառանգական իրավունք, սակայն չեն հրաժարվել իրենց հասանելիք բնակելի տարածության նկատմամբ ժառանգության իրավունքից:

4. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված անձանց սեփականության իրավունքով անհատույց բնակարան հատկացնելիս կամ բնակարան ձեռք բերելու համար անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելիս հաշվի են առնվում նաև նրանց ընտանիքի՝ սույն հոդվածի 3-րդ մասում նշված պայմանները բավարարող հետևյալ անդամները.

1) ամուսինը (կինը) և 18 տարին չլրացած երեխաները.

2) անգործունակ ճանաչված կամ մինչև 26 տարեկան ուսանող կամ 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամություն ունեցող զավակները, եթե հաշմանդամություն ունեցող են ճանաչվել մինչև իրենց 18 տարին լրանալը.

3) հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողի հետ նույն հասցեում հաշվառված ծնողները, իսկ զոհված (մահացած) զինծառայողի ծնողները՝ անկախ զինծառայողի զոհվելու (մահանալու) օրվա դրությամբ վերջինիս հետ համատեղ հաշվառված լինելու հանգամանքից.

4) զինծառայողի, հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողի, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողի խնամքի տակ գտնվող՝ 18 տարին չլրացած կամ անգործունակ ճանաչված կամ մինչև 26 տարեկան ուսանող կամ 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամություն ունեցող քույրը և եղբայրը, եթե հաշմանդամ են ճանաչվել մինչև իրենց 18 տարին լրանալը: Քույրը և եղբայրը համարվում են զինծառայողի, հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողի, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողի խնամքի տակ գտնվող, եթե

օրենքով սահմանված կարգով սահմանվել է խնամակալություն, և նրանց ծնողներն ունեն աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում:

5. Սույն հոդվածով սահմանված զինծառայողների բնակարանային ապահովությունն իրականացվում է յուրաքանչյուր տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով համապատասխան պետական լիազոր մարմնին հատկացված միջոցների հաշվին:

*Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք*
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
*Օ Ր Ե Ն Ք Ը*
ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գ Լ Ո Ւ Խ 8
*ԾԵՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏԸ, ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏԸ, ԿԵՐԱԿՐՈՂԻՆ ԿՈՐՑՆԵԼՈՒ ԿԱՄ ԳԵՐԻ ԸՆԿՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՆՊԱՍՏԸ*

**Հոդված 29. Ծերության նպաստի իրավունքը**

1. Ծերության նպաստի իրավունք ունի կենսաթոշակ ստանալու իրավունք չունեցող անձը՝ 65 տարին լրանալու դեպքում:

2. Ծերության նպաստի իրավունք ունեցող անձը նպաստ նշանակելու համար կարող է դիմել ցանկացած ժամանակ՝ իր հայեցողությամբ:

3. Ծերության նպաստը նշանակվում է ցմահ:

**Հոդված 30. Հաշմանդամության նպաստի իրավունքը**

1. Հաշմանդամության նպաստը նշանակվում է կենսաթոշակ ստանալու իրավունք չունեցող հաշմանդամին, ինչպես նաև հաշմանդամ երեխա ճանաչված անձին:

2. Հաշմանդամության նպաստը սահմանվում է հաշմանդամության ամբողջ ժամանակահատվածի համար:

**Հոդված 30.1. Գերի ընկնելու դեպքում նպաստի իրավունքը**

1. Սույն օրենքի 2-րդ հոդվածի իմաստով նպաստի իրավունք ունեցող անձի գերի ընկնելու դեպքում այդ անձի ընտանիքը ձեռք է բերում սույն հոդվածով նախատեսված նպաստի իրավունք:

2. Սույն հոդվածով նպաստի իրավունք ունեն գերի ընկած անձի ամուսինը, զավակները և ծնողները:

3. Գերի ընկնելու դեպքում նշանակված նպաստը սահմանվում է գերության ամբողջ ժամանակահատվածի համար:

Սույն հոդվածով նախատեսված նպաստի իրավունքից չեն օգտվում անձի գերի ընկնելու հիմքով օրենքով նախատեսված այլ բնույթի աջակցություն ստացող անձիք՝ բացառությամբ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված արտոնության:

**Հոդված 31. Կերակրողին կորցնելու դեպքում նպաստի իրավունքը**

1. Կերակրողին կորցնելու դեպքում նպաստի իրավունք ունի մահացած կերակրողի՝ կենսաթոշակ ստանալու իրավունք չունեցող՝

1) 18 տարին չլրացած երեխան՝ մինչև 18 տարին լրանալը.

2) առկա ցերեկային ուսուցմամբ սովորող զավակը՝ մինչև 26 տարին լրանալը.

3) ամուսինը կամ օրենքով սահմանված կարգով խնամակալ ճանաչված անձը՝ եթե նա զբաղված է մահացած կերակրողի 14 տարին չլրացած՝ սույն հոդվածով նպաստի իրավունք ունեցող երեխայի խնամքով, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների՝ նրա հետ հաշվառված է նույն բնակության վայրում (հասցեում) և չի աշխատում:

2. Կերակրողին կորցնելու դեպքում նպաստը նշանակվում է կերակրողին կորցնելու դեպքում նպաստի իրավունք ունենալու ամբողջ ժամանակահատվածի համար:

3. Կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստացող անչափահասն այդ իրավունքը պահպանում է նաև որդեգրվելու դեպքում:

4. Խորթ որդին և խորթ դուստրը կերակրողին կորցնելու դեպքում նպաստի իրավունք ունեն հարազատ որդուն և հարազատ դստերը հավասար:

5. Կերակրողին կորցնելու դեպքում նպաստի իրավունք ունեն նաև մահացած ճանաչված անձի ընտանիքի՝ սույն հոդվածում նշված անդամները: Մահացած ճանաչված անձի ընտանիքի անդամներին կերակրողին կորցնելու դեպքում նպաստ նշանակելիս այդ անձի մահվան օր է համարվում դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռում նշված մահվան օրը, իսկ եթե դատարանի վճռում նշված չէ անձի մահվան օրը, ապա նրան մահացած ճանաչելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը:

**Հոդված 32. Ծերության նպաստ, հաշմանդամության նպաստ, կերակրողին կորցնելու կամ գերի ընկնելու դեպքում նպաստ ստանալու իրավունքը, նպաստը նշանակելը և վճարելը**

1. Սույն օրենքի 29-31-րդ հոդվածներով սահմանված նպաստի իրավունք ունեցող անձը նպաստ ստանալու իրավունք ունի, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել է տարածքային կենտրոն, և նրան նշանակվել է ծերության նպաստ, հաշմանդամության նպաստ, կերակրողին կորցնելու կամ գերի ընկնելու ~~կամ կերակրողին կորցնելու~~ դեպքում նպաստ (այսուհետ՝ նաև նպաստառու):

2. Ծերության նպաստը, հաշմանդամության նպաստը, կերակրողին կորցնելու կամ գերի ընկնելու ~~կամ կերակրողին կորցնելու~~ դեպքում նպաստը այդ նպաստի իրավունք ունեցող անձի, իսկ անչափահասի կամ խնամակալության տակ գտնվող անձի դեպքում՝ նրա օրինական ներկայացուցչի (ծնողի, որդեգրողի կամ խնամակալի) գրավոր դիմումի հիման վրա նշանակում է տարածքային կենտրոնը՝ ըստ նպաստի իրավունք ունեցող անձի՝ Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեի (Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա): Դիմումին կից ներկայացվում են նպաստ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերը (տվյալները): Դիմումում ներառվող տվյալների կազմն ու բովանդակությունը, անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված դիմումը ներկայացվում է անձամբ:

4. Տարածքային կենտրոնը 10 աշխատանքային օրվա ընթացքում ճշտում է ներկայացված տվյալների հավաստիությունը և որոշում է ընդունում՝ նշանակել սույն հոդվածով սահմանված նպաստը կամ մերժել նպաստի նշանակումը: Նպաստի նշանակումը մերժելու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր ծանուցվում է դիմողը:

5. Տարածքային կենտրոնը մերժում է նպաստ նշանակելը, եթե դիմողը չունի նպաստի իրավունք կամ դիմումին կից չի ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթերը:

6. Բնակչության սոցիալական պաշտպանության պետական հաստատությունում բնակվող անձին ծերության կամ հաշմանդամության կամ կերակրողին կորցնելու կամ գերի ընկնելու դեպքում նպաստ չի նշանակվում և չի վճարվում, բացառությամբ երեխաներին նշանակված՝ կերակրողին կորցնելու դեպքում նպաստի:

7. Բնակչության սոցիալական պաշտպանության պետական հաստատությունում (մանկատանը) բնակվող երեխային վճարվում է կերակրողին կորցնելու դեպքում նպաստի 50 տոկոսը: Այդ գումարները, մինչև երեխայի 18 տարեկան դառնալը կամ սահմանված կարգով պետական կազմակերպությունից հեռանալը, հաշվառվում և վճարվում են «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

8. Սույն հոդվածով սահմանված նպաստը վճարվում է կենսաթոշակի համար սահմանված կարգով (այդ թվում՝ լիազորագրով):

8.1. Ռազմական ուսումնական հաստատությունում սովորող անձին կերակրողին կորցնելու դեպքում նպաստ նշանակվում և վճարվում է «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

8.2. Առաջին խմբի հաշմանդամի նպաստ նշանակելու դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվում են «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ առաջին խմբի հաշմանդամի կենսաթոշակի համար սահմանված կարգով:

8.3. Հաշմանդամ երեխա ճանաչված անձի հաշմանդամության նպաստը նշանակվում և վճարվում է նաև այդ նպաստն օրենքով սահմանված կարգով ստանալու իրավունք ունեցող ծնողի՝ նպաստը մյուս ծնողին վճարելու մասին նոտարական կարգով վավերացված համաձայնության հիման վրա, եթե գրավոր դիմումը և համաձայնությունը ներկայացվել են տարածքային կենտրոն:

9. Սույն օրենքի 29-30-րդ և 31-րդ ~~29-31-րդ~~ հոդվածներով սահմանված նպաստների իրավունք ունեցող անձն ունի այդ նպաստներից մեկն ստանալու իրավունք՝ իր ընտրությամբ:

**Հոդված 32.1 Ծերության նպաստ, հաշմանդամության նպաստ, կերակրողին կորցնելու կամ գերի ընկնելու դեպքում նպաստ նշանակելու ժամկետները**

1. Ծերության նպաստը նշանակվում է այդ նպաստի իրավունք տվող տարիքը (65 տարեկանը) լրանալու օրվանից, եթե նպաստ նշանակելու դիմումը ներկայացվել է այդ օրվանից հետո՝ երեք ամսվա ընթացքում:

2. Հաշմանդամության նպաստը նշանակվում է բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչվելու օրվանից, եթե նպաստ նշանակելու դիմումը ներկայացվել է այդ օրվանից հետո՝ երեք ամսվա ընթացքում:

2.1. Ընտանիքի անդամի գերի ընկնելու դեպքում նպաստը նշանակվում է իրավասու մարմնի՝ անձին գերի ընկած ճանաչելու օրվանից, եթե նպաստ նշանակելու դիմումը ներկայացվել է այդ օրվանից հետո՝ երեք ամսվա ընթացքում:

3. Կերակրողին կորցնելու դեպքում նպաստը նշանակվում է կերակրողի մահվան օրվանից, եթե նպաստ նշանակելու դիմումը ներկայացվել է կերակրողի մահվան օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում:

3.1. Եթե անձը ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու կամ գերի ընկնելու ~~կամ կերակրողին կորցնելու~~ դեպքում նպաստ ստանալու իր իրավունքը դադարելու օրվա դրությամբ ունի այդ նպաստներից որևէ տեսակի նպաստի իրավունք և այլ տեսակի նպաստ նշանակելու դիմումը ներկայացրել է նպաստ ստանալու իր իրավունքը դադարելու օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում, ապա այլ տեսակի նպաստը նշանակվում է նպաստ ստանալու իրավունքը դադարելու օրվանից:

4. Սույն հոդվածի 1-3.1-ին մասերում նշված ժամկետներից հետո դիմելու դեպքում նպաստը նշանակվում է դիմելու օրվանից:

**Հոդված 33. Ծերության նպաստ, հաշմանդամության նպաստ, կերակրողին կորցնելու կամ գերի ընկնելու դեպքում նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելը և վերականգնելը**

1. Ծերության նպաստ կամ հաշմանդամության նպաստ կամ կերակրողին կորցնելու կամ գերի ընկնելու դեպքում նպաստ ստանալու իրավունքը դադարեցվում է՝

1) նպաստառուի մահվան, ինչպես նաև նրան մահացած կամ անհայտ բացակայող ճանաչելու դեպքում.

2) նպաստառուի հաշմանդամության ժամկետը լրանալու դեպքում.

2.1) գերությունից ազատվելու դեպքում.

3) կերակրողին կորցնելու դեպքում նշանակված նպաստի սահմանված ժամկետը լրանալու կամ այդ նպաստի իրավունքը կորցնելու դեպքում.

4) օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող նպաստառուի՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունքի ժամկետը լրանալու կամ բնակվելու իրավունքը դադարելու դեպքում.

5) նպաստառուի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու դեպքում.

6) Հայաստանի Հանրապետության երկքաղաքացի նպաստառուի՝ մշտապես կամ առավելապես օտարերկրյա պետությունում բնակություն հաստատելու դեպքում (Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում օտարերկրյա պետությունում իր բնակության վայրի հասցեով հաշվառվելու դեպքում), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության բնակության վայրի (հասցեի) հաշվառումից դուրս գալու և մեկամսյա ժամկետում չհաշվառվելու դեպքում.

7) օտարերկրյա քաղաքացի նպաստառուին այլ պետությունում կենսաթոշակ նշանակելու կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացուն և Հայաստանի Հանրապետության երկքաղաքացուն Հայաստանի Հանրապետության հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջազգային պայմանագիր կնքած պետությունում կենսաթոշակ նշանակելու դեպքում.

8) նպաստի իրավունքը կորցնելու կամ նպաստի գործում կեղծ (ոչ հավաստի) փաստաթղթեր հայտնաբերելու դեպքում.

8.1) գերի ընկած անձի նկատմամբ պետական դավաճանության համար՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտի առկայության դեպքում.

9) նպաստառուին կամ նրա փոխարեն նպաստն ստանալու իրավունք ունեցող անձին 12 ամիս անընդմեջ նպաստ չվճարելու դեպքում.

10) նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելու մասին նոտարական կարգով վավերացված հայտարարությունը տարածքային կենտրոն ներկայացնելու դեպքում.

11) նպաստառուին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակ նշանակելու դեպքում, բացառությամբ սույն օրենքի 30.1-ին հոդվածով նախատեսված նպաստը ստանալու դեպքի.

12) անձին Հայաստանի Հանրապետության օրենքի խախտմամբ նպաստ նշանակված լինելու դեպքում.

13) անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող նպաստառուի՝ տասներկու ամիս անընդմեջ Հայաստանի Հանրապետությունից բացակայելու դեպքում (եթե նպաստը վճարվում է նպաստառուի օրինական ներկայացուցչին):

2. Նպաստ ստանալու իրավունքը դադարեցվում է այդ հանգամանքներն առաջանալու ամսին հաջորդող ամսվա 1-ից, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված դեպքի՝ հաշմանդամության ժամկետը լրանալու օրվանից, ինչպես նաև 11-րդ կետում նշված դեպքում՝ կենսաթոշակ նշանակելու օրվանից:

3. Առկա (ցերեկային) ուսուցմամբ ուսումնական հաստատությունում սովորող անձի՝ կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստանալու իրավունքը դադարեցվում է տվյալ տարվա հուլիսի 1-ից:

4. Նպաստ ստանալու իրավունքը վերականգնվում է՝

1) նպաստառուին մահացած կամ անհայտ բացակայող ճանաչելու մասին դատարանի վճիռը վերացնելու վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը ներկայացնելու և գրավոր դիմելու դեպքում՝ նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելու օրվանից.

2) 18 տարին լրացած անձի՝ կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելու օրվանից, եթե ուսման մասին ուսումնական հաստատությունից տեղեկանք է ներկայացվում այդ օրվանից հետո՝ 6 ամսվա ընթացքում, իսկ այդ ժամկետից հետո տեղեկանք ներկայացնելու դեպքում՝ գրավոր դիմելու օրվանից.

3) հաշմանդամության ժամկետը լրանալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, կրկին հաշմանդամ ճանաչվելու դեպքում՝ դադարեցնելու օրվանից, իսկ հաշմանդամության ժամկետը լրանալուց հետո՝ տասներկու ամսվա ընթացքում, հաշմանդամ ճանաչվելու դեպքում՝ հաշմանդամ ճանաչվելու օրվանից՝ բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնից ստացված՝ անձին հաշմանդամ ճանաչելու մասին բժշկասոցիալական փորձաքննական որոշման քաղվածքի հիման վրա.

3.1) հաշմանդամության ժամկետը լրանալուց տասներկու ամիս հետո հաշմանդամ ճանաչվելու դեպքում՝ հաշմանդամ ճանաչվելու օրվանից, եթե դիմումը ներկայացվել է հաշմանդամ ճանաչվելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, իսկ այդ ժամկետից հետո դիմելու դեպքում՝ դիմելու օրվանից.

4) սույն հոդվածի 1-ին մասի 9-րդ, 13-րդ կետերով նախատեսված հիմքերով նպաստ ստանալու իրավունքը դադարեցված լինելու դեպքում՝ գրավոր դիմելու և անհրաժեշտ փաստաթղթերը նպաստառուի (անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող նպաստառուի դեպքում՝ նրա օրինական ներկայացուցչի) կողմից անձամբ ներկայացվելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

5. Նպաստ ստանալու իրավունքը վերականգնվելու դեպքում տվյալ նպաստի իրավունքը չի վերանայվում:

6. Հաշմանդամության ժամկետը լրանալուց հետո՝ 3 ամսվա ընթացքում, կրկին հաշմանդամ ճանաչվելու դեպքում նպաստ ստանալու իրավունքը վերականգնելիս նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելու օրվան հաջորդող ժամանակահատվածի համար նպաստը վճարվում է հաշմանդամության նոր խմբի համար հաշվարկված չափով:

7. Նպաստ ստանալու իրավունքը վերականգնվում է, եթե նպաստառուն, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեում, իսկ նպաստը նրա օրինական ներկայացուցչին վճարվելու դեպքում՝ նաև եթե անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող նպաստառուն գտնվում է Հայաստանի Հանրապետությունում:

8. Հաշմանդամ երեխա ճանաչված անձի հաշմանդամության նպաստ ստանալու իրավունքը վերականգնվում, նպաստ վճարելը վերսկսվում և չվճարված նպաստի գումարը վճարվում է նաև սույն օրենքի 32-րդ հոդվածի 8.3-րդ մասով սահմանված՝ ծնողի համաձայնության հիման վրա:

9. Ուսումնական հաստատությունում սովորող անձի՝ կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստանալու իրավունքը վերականգնվում, նպաստ վճարելը վերսկսվում և չվճարված նպաստի գումարը վճարվում է «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

**Հոդված 34. Ծերության նպաստի, հաշմանդամության նպաստի, կերակրողին կորցնելու <u>կամ գերի ընկնելու</u> դեպքում նպաստի չվճարված գումարը վճարելը**

1. Ծերության կամ հաշմանդամության կամ կերակրողին կորցնելու <u>կամ գերի ընկնելու</u> դեպքում նպաստ ստանալու իրավունք ունեցող անձին չվճարված նպաստի գումարը վճարվում է դիմելու կամ նպաստ ստանալու իրավունքը վերականգնելու համար հիմք համարվող տեղեկատվությունը ստացվելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը նպաստ ստանալու իրավունք է ունեցել:

2. Նպաստառուի մահվան դեպքում չվճարված նպաստի գումարը վճարվում է մահացածի ամուսնուն կամ 14 տարեկան և դրանից բարձր տարիքի անչափահաս երեխային՝ անկախ նպաստառուի մահվան օրվա դրությամբ նրա հետ համատեղ նույն վայրում (հասցեում) հաշվառված լինելու հանգամանքից, իսկ ընտանիքի այլ անդամին՝ եթե նա, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, նպաստառուի մահվան օրվա դրությամբ նրա հետ համատեղ հաշվառված է եղել նույն վայրում (հասցեում): Անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող նպաստառուի մահվան դեպքում չվճարված նպաստի գումարը վճարվում է նաև նրա օրինական ներկայացուցչին՝ ծնողին, որդեգրողին կամ խնամակալին:

3. Նպաստառուի մահվան դեպքում չվճարված նպաստի գումարը վճարվում է, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը տարածքային կենտրոն են ներկայացվում նպաստառուի մահվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում:

4. Նպաստառուի մահվան դեպքում չվճարված նպաստի գումարը վճարելու համար վեցամսյա ժամկետում չդիմելու դեպքում նպաստառուի մահվան պատճառով չվճարված նպաստի գումարը ենթակա է ժառանգման:

**Հոդված 35. Նպաստառուի մահվան դեպքում թաղման նպաստը վճարելը**

1. Նպաստառուի մահվան կամ հաշմանդամության նպաստի իրավունք ունեցող անձի հաշմանդամության վերափորձաքննության ժամկետը լրանալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, վերափորձաքննության չներկայանալու և նրա մահանալու կամ վերափորձաքննության ներկայանալու, սակայն մինչև բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից այդ անձի վերաբերյալ որոշում կայացնելը մահանալու դեպքում հուղարկավորությունը կատարած անձին նշանակվում և վճարվում է թաղման նպաստ:

2. Բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված, հաշմանդամության նպաստի իրավունք ունեցող, բայց նպաստը նշանակելու համար չդիմած անձի մահվան դեպքում հուղարկավորությունը կատարած անձին նշանակվում և վճարվում է թաղման նպաստ, եթե հաշմանդամը մահացել է հաշմանդամ ճանաչվելու օրվանից հետո՝ 3 ամսվա ընթացքում:

2.1. Գերի ընկած անձի՝ գերության կամ գերությունից ազատվելուց հետո մեկ տարվա ընթացքում գերության ժամանակ ստացված խեղումների հետևանքով մահանալու դեպքում նպաստառուին վճարվում է թաղման նպաստ:

3. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող նպաստառուի մահվան դեպքում թաղման նպաստ չի վճարվում, եթե հուղարկավորությունը կատարում է այդ հաստատությունը:

4. Թաղման նպաստը նշանակվում է, եթե հուղարկավորությունը կատարվել է Հայաստանի Հանրապետությունում, կամ նպաստառուն մահացել է Հայաստանի Հանրապետությունում: Թաղման նպաստը նշանակվում է գրավոր դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը անձի մահվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում, տարածքային կենտրոն ներկայացնելու դեպքում:

5. Թաղման նպաստ նշանակելու և վճարելու կարգը, նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և թաղման նպաստի չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

6. Թաղման նպաստի սահմանվող չափը չի կարող պակաս լինել նախկին չափից:

**Հոդված 36. Քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող անձին ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու կամ գերի ընկնելու դեպքում նպաստ նշանակելը և վճարելը**

1. Քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող անձին ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու կամ գերի ընկնելու դեպքում նպաստ նշանակվում և վճարվում է կենսաթոշակի համար սահմանված կարգով: